ԹԵՄԱ 3 ԱՄԵՐԻԿԱ

ԴԱՍ 3.1. Հյուսիսային Ամերիկա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Լատինական Ամերիկայի մեջ մտնող Կենտրոնական Ամերիկան երբեմն համարում են առանձին տարածաշրջան, սակայն ավելի շատ ֆիզիկաաշխարհագրական տարածաշրջան է: Այն Կարիբյան ծովի ավազանի երկրների հետ անվանում են նաև Միջին Ամերիկա ենթատարածաշրջան: Ամերիկան միակ աշխարհամասն է, որ ամբողջությամբ գտնվում է արևմտյան կիսագնդում, Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև, ներառում է Հյուսիսային Ամերիկա և Հարավային Ամերիկա մայրցամաքները իրենց հարակից կղզիներով: Այն հյուսիսից հարավ ձգվում է 15000 կմ, զբաղեցնում է 42 մլն. քառ. կմ տարածք և ունի ավելի քան 1 մլրդ. բնակչություն:

Հավանաբար հիշում եք, որ հույներն ու հռոմեացիները Եվրոպան, Ասիան և Աֆրիկան անվանում էին **Հին Աշխարհ**, իսկ Աշխարհագրական մեծ հայտնագործությունների շնորհիվ հայտնագործածները՝ **Նոր Աշխարհ**: Հայտնագործումից հետո եվրոպացիները մեծ թափով գաղութացրին Ամերիկան:

• • •

«Ամերիկա» եզրույթն ունի այսպիսի նախապատմություն. Իտալացի (Ճենովացի) ծովագնաց Քրիստափոր Կոլումբոսը, որը ծառայում էր իսպանական թագավորական նավատորմում, նպատակ ուներ հասնել Հնդկաստան: Նա գիտեր երկրի գնդաձևության մասին և մտածում էր, որ կարելի է արևմուտք շարժվելով էլ հասնել Հնդկաստան: 1492թ հայտնաբերած կղզիներն անվանեց Վեստ Ինդիա (Արևելյան Հնդկաստան), կարծելով, թե հասել է Հնդկաստանի արևելյան ափերին: Հետագայում, ֆլորենցիացի ծովագնաց Ամերիգո Վեսպուչին (Էմերիգոս Վեսպուչիոս) վստահորեն ասաց, որ Կոլումբոսի հայտնագործածը Հնդկաստանը չէ, այլ նոր երկիր: Դա էր պատճառը, որ նոր աշխարհամասը կոչվեց Վեսպուչիի անունով...

Ամերիկան իր աշխարհագրական դիրքով, բնական պայմաններով ու ռեսուրսներով, բնակչության ազգային ու ռասայական կազմով և զարգացման պատմությամբ ինքնատիպ տարածաշրջան է: Պետությունների ճնշող մեծամասնությունը ելք ունի դեպի ծով:

• • •

Հարթավայրերի հողակլիմայական պայմանները բարենպաստ են դրանց բնակեցման, յուրացման և գյուղատնտեսության զարգացման համար:

Երկրաբանական զարգացման պատմությամբ էլ պայմանավորված է ընդերքի հարուստ լինելը մետաղական, ոչ մետաղական և վառելիքային մի շարք հանածոներով:

Երկաթաքարով հարուստ են Բրազիլիան (երկրորդը՝ աշխարհում, մոտ 70 մլրդ. տ **Իթաբիրա**, **Կարաժաս**), Կանադան (30 մլրդ. տ Լաբրադոր թերակղզի), ԱՄՆ-ը, գունավոր մետաղներով՝ Անդերը (պղինձ, արծաթ), նավթով և գազով **Մեքսիկական** ծոցը, **Վենեսուելան**, քարածխով՝ ԱՄՆ-ը, **Ապալաչների** և **Իլինոյսի** ավազանները աշխարհի 10-ը խոշոր ավազաններից են: Կան նաև բոքսիտների, ցինկի, կապարի, անագի, ուրանի, ոսկու, քիմիական հումքի, թանկարժեք քարերի պաշարներ:

• • •

ԱՄՆ-ի և Կանադայի սահմանի Խաղաղօվկիանոսյան ափին միջին հունվարյանը 0^0C է, Ատլանտյան ափին՝ -10^0-ից -20^0C (ինչու՞): Արևմուտքում՝ Կորդիլերները փակում են օդային զանգվածների ճանապարհը դեպի ցամաքի կենտրոն, այդ պատճառով էլ նույնիսկ ծովերից ոչ շատ հեռու կլիման դառնում է չորային: Ատլանտյանի ափին ձևավորվում է խոնավ կլիմա: Լաբրադոր թերակղզում ձյան շերտի հաստությունը հասնում է 2 մ-ի: Հարավային Ամերիկայի հարավը (Պատագոնիա սարահարթ) բարեխառն գոտում է:

• • •

Միսիսիպիի երկարությունը 6400 կմ է, միջին ծախսը՝ 20000 խ. մ վրկ: Ջրառատ ու նավարկելի գետ է **Սուրբ Լավրենտիոսը**, որը **Ամերիկյան մեծ լճերի** հետ կազմում է խորջրյա գետալճային մի համակարգ (համակարգի Նիագարա գետի վրա ԱՄՆ և Կանադայի սահմանին գտնվում է համանուն ջրվեժը՝ 51 մ բարձրությամբ), որով նույնիսկ ծովային նավերը հասնում են **Միչիգան** լճի ափին գտնվող **Չիկագո** նավահանգիստ: Ջրաէներգետիկա-

կան հսկայական պաշարներով առանձնանում է **Կոլումբիա** գետը, որի վրա ջրէկ-ների կասկադ կա (խոշորագույն ջրէկը՝ **Գրանդ Կուլի**, աշխարհի խոշորագույնների տասնյակում է): **Կոլորադո** գետի վրա էլ գտնվում է 2 կմ խորություն ունեցող **Մեծ Կանյոնը**:

Հյուսիսային Ամերիկայում լճերից նշանավոր են Ամերիկյան Մեծ լճերը՝ **Վերին, Միչիգան**, **Հուրոն**, **Էրի**, **Օնտարիո**: Խոշոր են նաև **Մեծ Արջի**, **Ստրուկների մեծ**, **Վինիպեգ**, **Աթաբասկա** և **Մեծ Աղի լճերը**:

• • •

Բերինգի նեղուցի տեղում եղել է ցամաքային կամուրջ, Ալյասկա և Չուկոտյան թերակղզիները կապող ցամաք: 20 հազար տարի առաջ էլ թափանցեցին Հարավային Ամերիկա: Դա է պատճառը, որ տեղաբնիկները՝ հնդկացիները պատկանում են **մոնղոլոիդ** ռասայի ամերիկյան ճյուղին: Նրանց երբեմն անվանում են **ամերիկանոիդ**: Գաղութացման ժամանակ շատ են տուժել տեղաբնիկների այն ցեղերը, որոնք եվրոպացի նվաճողներին համառ դիմադրություն են ցույց տվել: Մայրցամաքի հյուսիսում ապրում են **էսկիմոսներ** և **ալեութներ**:

Աֆրիկայից աշխարհամաս են բերվել **նեգրոիդ** ռասայի ներկայացուցիչներ, որոնք որպես ստրուկներ աշխատել են տարբեր մշակաբույսերի **տնկատափերում** (պլանտացիաներում): Ստրկատիրության վերացումից հետո (ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինքոլնը վերացրեց) նրանք դարձան ազատ քաղաքացիներ: Նրանք բարձր տեսակարար կշիռ ունեն ԱՄՆ-ում՝ 12%:

• • •

Շուրջ 500 ամյա պատմության ընթացքում եկվորների խառնամուսնություններից առաջացել են խառնածինների՝ աշխարհում ամենամեծ խմբերը՝ **մետիսները** (եվրոպեոիդների և մոնղոլոիդների խառնամուսնությունից), **մուլատները**՝ (եվրոպեոիդների և նեգրոիդների խառնամուսնությունից), **սամբոները**՝ (մոնղոլոիդների և նեգրոիդների խառնամուսնությունից), որոնք լատինական շատ երկրներում մեծամասնություն են կազմում:

• • •

Տնտեսությունը: Ամերիկայի տնտեսության ձևավորման ու զարգացման վրա մեծ ազդեցություն են թողել բարենպաստ աշխարհագրական դիրքը Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների միջև, երկու Ամերիկաները միացնող համանուն պարանոցի տեղում կառուցված ծովային խոշոր ջրանցքը

(Պանամայի), որտեղ հատվում են համաշխարհային կարևորագույն ծովային ուղիները, բազմազան հանքային, ջրային, հողային ռեսուրսները և ներգաղթյալ աշխատանքային ռեսուրսները:

• • •

Աշխարհամասի դիրքը բարենպաստ է նաև Եվրոպա, Ասիա և Աֆրիկա աշխարհամասերի նկատմամբ, որոնց հետ կապված է բազմաթիվ ծովային ճանապարհներով: Ամերիկայի դիրքը բարենպաստ է նաև աշխարհաքաղաքական առումով. Նրա տարածքը հեռու էր I և II աշխարհակործան աշխարհամարտերից: Առաջին աշխարհամարտում Եվրոպան կորցրեց 20 մլն. մարդ, երկրորդում՝ 55 մլն. (20 մլն-ը՝ ԽՍՀՄ-ը), ավերվեց և քայքայվեց տնտեսությունը (հատկապես՝ Արևելյան Եվրոպայում):

Աշխարհամասում կա 33 անկախ պետություն: Կան նաև կախյալ՝ կիսագաղութային փոքր երկրներ: Բնակեցված միակ աշխարհամասն է, որտեղ բոլոր ինքնիշխան պետությունները կառավարման ձևով հանրապետություններ են: ԱՄՆ-ն, Կանադան, Մեքսիկան, Բրազիլիան, Արգենտինան պետական կառուցվածքով դաշնային են:

• • •

Հյուսիսային Ամերիկայի բարձր գագաթը **Մակ Քինլին** է՝ 6193 մ բարձրությամբ: Այն Ալյասկայի լեռնաշղթայի վրա է: Խոշոր հարթավայրեր են **Միսիսիպիի** դաշտավայրը, **Մեծ հարթավայրերը**, **Կենտրոնական հարթավայրերը** (Հյուսիսային Ամերիկա), **Բրազիլական**, **Գվիանական**, **Պատագոնիա** սարահարթերը, **Ամազոնի**, **Օրինոկոյի** դաշտավայրերը (Հարավային Ամերիկա):

Կլիման: Հյուսիսից հարավ մեծ ձգվածության պատճառով բնակլիմայական պայմանները խիստ բազմազան են: Աշխարհամասը տարածված է Հյուսիսային կիսագնդի բոլոր և Հարավային կիսագնդի կլիմայական, ջերմային գոտիների ու բնական զոնաների մեծ մասում: Օրինակ, Հյուսիսային Ամերիկայում բացասական ջերմաստիճաններով օրերի թիվը հարավում մինչև 5 օր է, ԱՄՆ-ի և Կանադայի սահմանի գոտում՝ 180 օր, Կանադական Արկտիկական կղզեխմբի հյուսիսում՝ 300 օր: Հարավային Ամերիկան աշխարհի ամենախոնավ մայրցամաքն է:

• • •

Հարավային Ամերիկայում լճերը քիչ են՝ **Տիտիկակա**, **Պոոպո**,

Մարակաիբո: Տիտիկական խոշոր լճերի մեջ աշխարհում ամենաբարձրադիրն է՝ 3812 մ բարձրության վրա: Մարակաիբո ծովալճակը (լագուն) ցամաքի հյուսիսում է:

Հյուսիսային Ամերիկայում կլիմայական պայմանների ազդեցությամբ բնական զոնաները միմյանց հերթափոխում են առավելապես **միջօրեականի** ուղղությամբ: Մայրցամաքը բնական նույն զոնայում է, ինչ Եվրասիան, բայց դրանց տարածումը միմյանցից որոշ չափով տարբերվում է: Ինչու՞: **Լավրենտյան** բարձրավայրում բնական զոնաները տարածվում են 12–14^0-ով ավելի հարավ, քան Եվրասիայում (բացատրեք, ինչու՞): Կանադան և ԱՄՆ–ը հարուստ են անտառային ռեսուրսներով: Արևմտյան ափամերձ գոտու լեռներում տարածված են **լեռնային անտառները**, որոնք աչքի են ընկնում ծառատեսակների բազմազանությամբ ու միավոր մակերեսի հաշվով փայտանյութի մեծ պաշարով:

• • •

Այսպիսով, Ամերիկա աշխարհամասը ունի հանքային, անտառային, ջրային, հողային հարուստ ռեսուրսներ, որոնք բարենպաստ նախադրյալներ են տնտեսության տարբեր ճյուղերի ու ենթաճյուղերի զարգացման համար:

Բնակչությունը: Գիտնականների կարծիքով Ամերիկա աշխարհամասը չի համարվում մարդու ծագման օրրան: Նրանք 25–30 հազար տարի առաջ Հյուսիսային Ամերիկա են թափանցել Ասիայից:

• • •

Ամերիկայում բնակչության բնական աճը մոտ է համաշխարհային միջինին: Այն համեմատաբար բարձր է Լատինական Ամերիկայում:

Ամերիկան միշտ եղել է միգրացիայի դրական հաշվեկշիռ ունեցող աշխարհամաս, բնակչությունը ավելի շատ ավելացել է (հատկապես ԱՄՆ–ում և Կանադայում) մեխանիկական աճի հաշվին, քան՝ բնական: Սակայն եթե նախկինում բարձր տեսակարար կշիռ ունեին եվրոպացիները, այժմ ներգաղթողների մեջ մեծ է չինացիների, արաբների և ասիական այլ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի բաժինը:

Աշխարհամասը երկրագնդի հայաշատ վայրերից է: Խոշոր գաղթօջախներ են ստեղծվել ԱՄՆ–ում (1,2 մլն, հատկապես՝ Կալիֆոռնիայում), Կանադայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում:

Բարձր է ուրբանացման մակարդակը: Մի շարք երկրներում այն անցնում է 80%–ից՝ ԱՄՆ, Կանադա, Վենեսուելա, Մեքսիկա: Ուրբանացումը թևակոխել է իր տարածքային զարգացման բարձրագույն փուլը: